

ՄՄՆԵ ՄԵԼԹՈՆԻ
ՄՎԱԶՅԱՆ

Երաժշտագետ,
Ա. Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի
4-րդ կուրսի ուսանողուհի
E-mail: manesvazyan5@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.2.65-110

Ղեկավար՝ արվ. թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական
կոնսերվատորիայի դասախոս Արմենուհի Բաբոյան

«Երաժշտական հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Օովիհնար Հրայրի Մովսիսյանի 12.10.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 20.11.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 2.10.2023 թ.

ԱՐԹՈՒՐ ԱՔՇԵԼՅԱՆ. «ԵՐԵՔ ՊԻԵՍ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՀԱՄԱՐ»

Անփոփում

Հնդվածում ներկայացված է երիտասարդ կոմպոզիտոր Արթուր Աքշելյանի անցած ստեղծագործական ուղին, ով իր կրթությունն ստացել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժնում, պրոֆեսոր Վ. Աճեմյանի ղեկավարությամբ և 2007-ին ուսումը շարունակել է Ֆրանսիայի Երաժշտական Բարձրագույն դպրոցում, կոմպոզիտոր Միքայել Շարրելի դասարանում: Կոնսերվատորիան ավարտելիս, որպես դիպլոմային աշխատանք գրել է «Ձայն նվագախմբի համար» ստեղծագործությունը: Հնդվածագիրը ներկայացնում է կոմպոզիտորի ստեղծագործական հետաքրքրությունները, ոճական առանձնահատկությունները, նախասիրությունները: Հետաքրքիր է կոմպոզիտորի ձեռագրի ուրույն հատկանիշը, որն էլ երաժշտության երանգի նկատմամբ պրպտումներն են: Նրա ստեղծագործությունների ցանկում գերակշռում են կամերային ստեղծագործությունները, որոնցից է «Երեք պիես նվագախմբի համար» գրված 2020 թվականին: Այդ երկով մասնակցել է Շվեյցարիայի Բազել քաղաքում անցկացվող կոմպոզիտորական 3-րդ միջազգային մրցույթին, զբաղեցնելով 2-րդ հորիզոնականը, որի արդյունքում «Երեք պիես նվագախմբի համար» ստեղծագործությունը հնչել է Բազելի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ՝ դիրիժոր Ֆրանչեսկո Պրատի ղեկավարությամբ: Ստեղծագործությունը վերլուծվում է:

Բանալի-բառեր. Արթուր Աքշելյան, Բազելի սիմֆոնիկ նվագախումբ, «Երեք պիես նվագախմբի համար», Վ. Աճեմյան, Միքայել Շարրելի, կոմպոզիտոր:

Abstract

Musicologist, 4th-year student at A. Babajanyan Music-Pedagogical College **Mane Melkon Svazyan.** - «**Arthur Akshelyan: "Three Pieces for Orchestra"**».

The article presents the creative path of the young composer Arthur Akshelyan, who received his education in the Composition Department of Yerevan State Conservatory under the supervision of Professor V. Ajemian. In 2007, he continued his studies at the Geneva University of Music in composer Michael Jarrell's class. Upon graduating from the conservatory, he wrote the composition "Sound for Orchestra" as his diploma work. The author highlights Akshelyan's creative interests, stylistic features, and preferences. An interesting characteristic of the composer's style is his exploration of musical tone. His catalog of works predominantly features chamber compositions, one of which is "Three Pieces for Orchestra", written in 2020. With this piece, he participated in the 3rd International Composition Competition held in Basel, Switzerland, and secured 2nd place. As a result, "Three Pieces for Orchestra" was performed by the Basel Symphony Orchestra under the baton of conductor Francesco Prati. The composition is analyzed in the article.

Key Words: Arthur Akshelyan, Basel Symphony Orchestra, "Three Pieces for Orchestra," V. Ajemian, Michael Jarrell, composer.

Աբստրակտ

Музыковед, студентка 4 курса Музыкально-педагогического колледжа им. А.Бабаджаняна **Мане Мелконовна Связян**. - **“Артур Акшелян. Три пьесы для оркестра”**.

В статье освещается творческий путь молодого композитора Артура Акшеляна, который получил профессиональное образование в ЕГК в композиторском классе проф. В. Аджемяна, далее с 2007 года продолжил учебу в Женевской высшей школе в классе композитора Микаэля Жарреля. Дипломной работой в консерватории стало произведение “Толос для оркестра”. Автор статьи представляет творческие интересы и предпочтения, стилистические особенности творчества композитора. Интересна особенность авторского стиля композитора - особое отношение к звуковой палитре. В списке его сочинений преобладают камерные сочинения, к которым относятся “Три пьесы для оркестра”, написанные в 2020 году. Это произведение участвовало в третьем международном композиторском конкурсе, проходящем в швейцарском городе Базеле. Артур Акшелян занимает второе место в исполнении Базельского симфонического оркестра под руководством дирижера Франческо Пратта.

Ключевые слова: Артур Акшелян, Базельский симфонический оркестр, “Три пьесы для оркестра”, В. Аджемян, Микаэль Жаррель, композитор.

XX դարը համարվում է երաժշտական մտածողության փուլային շրջադարձը, որն սկզբունքորեն նշանավորվել է նոր երաժշտական և գեղարվեստական կառույցների ձևավորմամբ ու զարգացմամբ: Այս ամենը չէր կարող աննկատ թողնել որևէ արվեստագետի, հասկապես, երբ կար ցանկություն բացահայտելու նորը և ինչ-որ չափով «անհասանելին»:

Հայ ժամանակակից երաժշտության իրականության տիրույթում, յուրաքանչյուր նոր ստեղծագործություն յուրահատուկ է ոճերի բազմազանությամբ և հնարավորություն է տալիս ուսումնասիրել նոր երևույթները, բացահայտել հայ երաժշտության պատմության նոր էջեր և դրանք դիտարկել համաշխարհային երաժշտության համատեքստում:

Արթուր Աքշելյանի ստեղծագործական որոնումներն ուղեկցվեցին մի շարք նետված մարտահրավերների դիմակայման, ինքնահղկման, փնտրելու և գտնելու, գեղագիտական հայացքների ձևավորման ընթացքով:

Կրթություն ստանալով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ պրոֆեսոր Վարդան Աճեմյանի ստեղծագործական դասարանում, 2007 թվականին ուսումը շարունակում է Ժնևի երաժշտական բարձրագույն դպրոցում (կոմպոզիտոր Միքայել Ժարրելի դասարանում): Կոնսերվատորիան ավարտելիս, որպես դիպլոմային աշխատանք, ներկայացնում է «Չայն նվագախմբի համար» ստեղծագործությունը:

Մի շարք հանդիպումներ է ունեցել կոմպոզիտորներ Ստեֆանո Գերվազոնիի, Պոլ Մեֆանոյի, Անրի Դյուտիլոյի, Աշոտ Չոխրաբյանի, Տիգրան Մանսուրյանի, Սոֆյա Գուբայդուլինայի հետ:

Մասնակցել է կանադական «Domaine Forget» և անգլիական «Arditti» քառյակների մասնագիտական դասընթացներին: Համագործակցել է ճանաչված անսամբլների «Insomnio» (Հոլանդիա), «Contrechamps» (Ժնև), «Nouvel Ensemble Moderne» (Քվեբեկ) և հայ ժամանակակից կոմպոզիտորական դպրոցի երիտասարդ ներկայացուցիչների հետ, որոնց թվում են՝ Արթուր Ավանեսովը, Հայկ Մելիքյանը, Արամ Հովհաննիսյանը, Ալեքսանդր Իրադյանը և այլք: Նրա ստեղծագործությունները կատարվել են մի շարք երկրներում՝ Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Ֆինլանդիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ամերիկա, Կանադա և այլն:

Հետաքրքիր է Արթուր Աքշելյանի երաժշտության երանգը: Իր առջև դրված խնդրի պարզ, որոշ դեպքերում այլաբանական մեկնությունները, ստեղծում են կոմպոզիտորի ձեռագրի ուրույն հատկանիշները, որը նկատվում է ուսանողական տարիներից սկսած:

Աքշելյանի ստեղծագործություններին հատուկ է լակոնիզմը, որի արդյունքում կրճատվում է դրանց տևողությունը, թափանցիկ ֆակտուրան, տրված ծրագրի վերացական արտահայտումը, ինչը երբեմն ներկայացված է որոշ երկերի վերնագրերում: Մրանց հիմքը կազմում է Աքշելյանի «որդեգրած» գաղափարը, այն է՝ «Մինիմալ միջոցներով քաղել մաքսիմալ և ստանալ արդյունք»:

Ինչպես նշել է կոմպոզիտորը. - «Պետք է ընտրել շատ պարզ միջոցներ, որպեսզի հնարավորին չափ դրանք լինեն հսկողության տակ, իսկ թե ինչպես կզարգանա կոմպոզիցիան, դա արդեն այլ խնդիր է, կախված տարբեր մտքերից»:

Այս միտումը որոշ չափով հարում է XX դարի առաջին կեսի ֆրանսիական կոմպոզիտորական դպրոցի գաղափարներին, երկերում նկատելի ստատիկ բնույթը՝ իմպրեսիոնիստական տենդենցին (1.): Կոմպոզիտորի երաժշտությունը փոխանցում է որոշակի տրամադրություն, պատկեր, ընդգծված հատուկ երանգով, իսկ ընթացքն արդեն գեներացնում է ունկնդրի երևակայությունը: Որոշ երկեր համալրվում են նաև հայ ժողովրդական երաժշտության ինտոնացիոն դարձվածքներով՝ հանգեցնելով միևնույն ստեղծագործության տարբեր ընկալումների և մեկնությունների: Նշենք նաև, որ այս ամենի հետևում կարող է թաքնված լինել խորքային գաղափար, որը կոմպոզիտորն ամբողջությամբ չի բացահայտում:

XX դարում աճող էքսպերիմենտի տարրը նկատվում է նաև Աքշելյանի ստեղծագործություններում: Սկզբունքորեն, լսելի էքսպերիմենտներ, որոնք արված են նոր հնար առաջ բերելու նպատակով, կարելի է ասել բացակայում են: Սակայն էքսպերիմենտ բառն ինքնին բավականին լայն իմաստներով կարելի է գործածել և այս դեպքում դրա առկայությունը ոչ թե նորը և չտեսնվածը ցուցադրելն է, այլ՝ մեջբերենք կոմպոզիտորի խոսքը՝ «Կա էքսպերիմենտ ինքս ինձ համար, օրինակ գործիքավորման մեջ, կառուցվածքի, բովանդակության... բայց անել էքսպերիմենտ, որը լսված չէ, ինձ մոտ չկա»:

Իր երկացանկում դեռևս գերակշռում են կամերային սիմֆոնիկ ժանրի գործերը՝ «Երաժշտություն տրիոյի համար», «Stay Home» մանրանվագը կլարնետի և ալտի համար, «Երաժշտություն ջութակի և նվագախմբի համար», «8 երաժշտների անսամբլ», «Ռազմական տեսարաններ» գրված համր ֆիլմի համար, և «Երեք պիես նվագախմբի համար» երկը, որը դեռևս կոմպոզիտորի ամենամասշտաբային աշխատանքն է: Շուրջ 19 ռուպե տևողությամբ այս երկն առանձնանում է վառ պատկերայնությամբ, գործիքային հնարների զանազանությամբ ու մտահղացումների մարմնավորման լիիրավ հնարավորությամբ:

Գրվել է 2020 թվականին: Նույն ժամանակահատվածում, մասնակցելով Շվեյցարիայի Բազել քաղաքում անցկացվող կոմպոզիտորական երրորդ միջազգային մրցույթին, Արթուր Աքշեյանը զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը, որի արդյունքում «Երեք պիես նվագախմբի համար» ստեղծագործությունը հնչում է Բազելի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ՝ դիրիժոր Ֆրանչեսկո Պրատի ղեկավարությամբ:

Ստեղծագործության համար հիմք են ծառայել կոմպոզիտորի՝ նոր վերախմաստավորում ստացած, անձնական արխիվի որոշ գրառումներ:

Երեք մասերից յուրաքանչյուրը վերնագրված է՝ «Զուգահեռ կյանքեր», «Արևելյան ամպեր» և «Կերպարանափոխություն»: Մասերում առկա երաժշտական նյութի գաղափարական հիմքն առաջին հայացքից տարբեր է, միայնակ հաջորդող հակադրման սկզբունքի տիպական դրսևորումով: Մակայն մասերը միմյանց կապող օղակ են հանդիսանում կիրառված բազմազան մոտիվային հնարները, որոնք հանգեցնում են սկզբնական նյութի հաստատմանը: Պետք է նշել, որ ստեղծագործության նոտային օրինակում կոմպոզիտորը որոշ հղումներ է տալիս, որոնց մասին կխոսենք ստորև, հատվածները ներկայացնելու ընթացքում:

Առաջին մաս՝ «Զուգահեռ կյանքեր» (Parallel lives): Եթե փորձենք ամփոփ ներկայացնել կոմպոզիտորի խոսքը, համադրելով մեր կարծիքին, ապա՝ կյանքեր, որոնք զուգահեռ կարող են գոյություն ունենալ տարբեր իրականություններում, բայց հանդիպելով միմյանց, միավորվել:

Մասի ձևակառուցման հիմքում ընկած են մի քանի հիմնաքարային կառույցներ, որոնց շնորհիվ նվագախմբում ձևավորվում է երկու շերտ: Առաջինում ներկայացվում է վերընթաց և վարընթաց խրոմատիկ քայլերով մոտիվ, որը հնչելով տարբեր գործիքային խմբերում, ստեղծում է տեմբրային բազմազանություն և ենթարկվում ֆիգուրացիոն զարգացման: Այն իրենից ներկայացնում է ռիթմիկ շարժում, որում թեմատիկ գիծը բացակայում է: Փոխարենը երկրորդ շերտում՝ ջութակների նվագամասում, պոլիֆոնիկ զուգորդմամբ հնչում է հայկական ինտոնացիաներով հագեցած թեման: Ազգային երանգն արտահայտում է քնարական, փոքր-ինչ թախծոտ ոչ շտապ շարդանքով և փռուզիական հիմքով թեմատիկ նյութը:

Հարմոնիկ ակորդային շարքը կառուցվում է հիմնական մոտիվի հնչյունների հիման վրա: Այս ամենին թարմ շունչ է հաղորդում լարային խմբի pizzicato-ն, ինչի արդյունքում ձևավորվում է լարայինների և փայտյա փողայինների միջև երկխոսություն: Այնուհետև սկզբնական մոտիվի վերընթաց շարժումները հանգեցնում են բարձրակետի, որտեղ ընդգծվում է թեման: Մշուշից լույսին ձգտելու տպավորությամբ ավարտվում է 1-ին մասը (2. էջ 24-26):

Զուգահեռ կյանքերի բախումը և միաձուլումը երաժշտության մեջ, կարծես հուշում է միաժամանակ գոյություն ունեցող իրադրությունների և աշխարհների մասին, ներկայացնելով հայկական իրականությունը և նրան զուգահեռ աշխարհի տարբեր ծայրամասերում շարունակվող մարդկային կյանքի տրամաբանական հունը:

Երկրորդ մասը՝ «Արևելյան ամպեր»-ը, (Eastern clouds) առաջ է բերում գունային նոր երանգ: Այն հակադրվում է առաջին և երրորդ մասերին: Հանդարտ բնույթը, արևելյան կոլորիտը կոմպոզիտորն արտահայտել է տեմբրալ նուրբ գործիքավորման միջոցով: Մուտքն ազդարարող կլիմատա ինտերվալն ստեղծում է խորհրդավորություն, միստիկա՝ անմիջապես գրավելով ունկնդրի ուշադրությունը: Պղնձյա փողայինների նվագաբաժնում թաքնված ձայնատարությամբ հնչում է արևելյան երաժշտական դարձվածքներ հիշեցնող մոտիվը: Կարծես երգող փողային խումբը ձուլվում է մյուս գործիքային շերտերին, որոշակի հեռավորության վրա ստեղծում դիսոնանս համահնչյուններ և ավելի վառ ընդգծվում բարձր ռեգիստրներում շարադրվելիս: Արդյունքում, մեկ մոտիվի ավարտը հանդիսանում է մյուսի սկիզբը: Շարունակ չընդհատվող մտքի նման շարադրանքը հանգեցնում է գործիքային պոլիֆոնիկացման: Դրան լրացնում է տոպրակների միջոցով օգտագործված տեմբրային հնարքը, որտեղ տոպրակները ձայնն արտաբերում են մեղմ սեղման միջոցով և կատարվում բեմի ետնամասից: Կարծես նկարագրում են ամպերի կուտակումները երկնքում և պատկերում տեսողական-երևակայական ամպերի պոլիֆոնիկ շարվածք (3):

Երրորդ մասը՝ «Կերպարանափոխություն»-ը (Transfiguration): Կոմպոզիտորն այն կապում է ժամանակակից ֆրանսիացի պոետ Միշել Ուելբեթի «Հնազանդություն» գրական երկի հետ: Հաշվի առնելով այն փաստը, որ գիրքը պատկանում է հակաուտոպիա ժանրին, զուցե կայր կայանում է նրանում, որ երկի ընթերցման և գործողությունների զարգացման ընթացքը նույնքան կառուցողական և կերպարանափոխության ընթացքին հարող է, որքան Աքշեյանի երաժշտությունը: Իհարկե, չենք կարող ամբողջովին վստահ լինել այս ենթադրության ճշգրիտ լինելու հարցում, քանի որ կոմպոզիտորը չի տալիս դրա մեկնությունը: Կերպարանափոխությունն առաջին հերթին վերաբերում է գործիքների կատարման ոչ հատուկ եղանակին: Այսպես օրինակ՝ ֆլեյտայի նվագամասում գրված է՝ air without any pitch՝ օդ առանց ոչ մի նոտա: Կատարողը փչելու միջոցով արտահայտում է ձայն, ստեղծելով ոչ հստակ բարձրություն ունեցող հնչյուններ: Նույն սկզբունքով, լարային խումբը նվագում է փայտին հարվածելու միջոցով: Մրանց զուգահեռ հնչում են ծափեր, ստեղծելով մետրառիթմական հետաքրքիր պատկեր:

Կ ո ո մ ա ղ ի տ ո թ ա կ ա ն ա ր վ ե ս տ

ՈՒՄԱՆԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբ միտքը հասնում է որոշակի տրամաբանական հատվածի, հրնչում է առաջին մասից եկող մոտիվը, որը վարընթացի փոխարեն վերընթաց շարժումներով է հանդես գալիս՝ ազդարարելով կերպարանափոխության վերադարձն սկզբին: Թեմատիկ առումով կապ չունեցող, բայց մտքի տրամաբանությանը հաջորդող գործիքային բաժնում ստեղծվում է կառուցվածքային ամբողջականություն, որն ամփոփում է երկի գաղափարը՝ հանգեցնելով ավարտին:

Այսպիսով՝ հավատարիմ մնալով կոմպոզիցիայի ձևակառուցման իր սկզբունքներին, կոմպոզիտոր Արթուր Աքշեյանն ստեղծագործության գաղափարը ներկայացրել է զուսպ և ամփոփ, արտահայտված հորիզոնական կառույցների պոլիֆոնիկ շարադրանքով, որոշակի լարային հիմք ունեցող թեմատիկ մոտիվային առկայությամբ, ռիթմական մոտիվների միջոցով՝ զարգացման նոր փուլեր ի հայտ բերելով, յուրօրինակ գործիքային տեմբրերի համադրմամբ և հակադրմամբ և դրանց ոչ ավանդական կիրառմամբ: Համակցված են կոմպոզիտորի ստեղծագործական ուղու շարունակվող որոնումները, արդի երաժշտարվեստին հատուկ ասելիքի այլաբանական մատուցումը, դրանից բխող երաժշտաարտահայտչական միջոցների յուրովի մեկնաբանումը: Իսկ «զուգահեռ կյանքեր»-ի գաղափարը, լինելով շարունակական գերհագեցած ընթացք, իր արդիականությամբ հնարավորություն կտա կոմպոզիցիան դասել արդի հայ երաժշտության ինքնատիպ նմուշների շարքին՝ պայմանավորված ասելիքի արդիականությամբ: Զեկույցը եզրափակենք ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, երաժշտագետ Սվետլանա Կորյունի Սարգսյանի խոսքերով. «Интеллектуальное постижение Востока Западом привело к необходимости проникновения в его духовную сущность, которая, в свою очередь,

предполагала высокую степень абстрактного мышления и особую психологическую готовность» (4. էջ 172):

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնու կոմպոզիտոր Արթուր Աքշեյանին, նրա հետ ունեցած հարցազրույցի և անհրաժեշտ նյութերի տրամադրման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кунецкая Р., Французские композиторы XX века. М., 1990.
2. Зарубежная музыка XX века. Материалы и документы /Ред. И. Нестьев., М., 1975, стр. 24-26.
3. Когтлек Ц, Техника композиции в музыке XX века., М., 1976.
4. Саркисян С., Армянская музыка в контексте XX века., глава 7. Восточный авангард и авангардный Восток., М., 2002.

Kunitskaya R, French Composers of the 20th Century. - Moscow, 1990.

Foreign Music of the 20th Century. Materials and Documents / Editor: I. Nestev. - Moscow, 1975, pp. 24-26.

Kohoutek C., Composition Techniques hi the 20th Century Music. - Moscow, 1976.

Sarkisyan S., Armenian Music in the Context of the 20th Century. - Moscow, 2002, Chapter Seven. Eastern Avant-Garde and Avant-Garde East, p. 172.

REFERENCES

1. Kunitzkaya R, Frantzuzskie kompozitory XX veka., М., 1990.
2. Zarubezhnaya muzyka XX veka., Materialy i dokumenty., /Red. I. Nestev., М., 1975, pp. 24-26.
3. Kogoutek Tz., Tekhnika kompozitii v muzyke XX veka., М., 1976.
4. Sarkisyan S. Armyanskaya muzyka v kontekste XX veka.,Glava 7. Vostochnyj avangard i Avangardnyj Vostok., М.: 2002.

Հեղինակի մասին. ՄԱՆԵ ՄԵԼԻՔՈՆԻ ՍՎԱԶՅԱՆ (ծ. 14.12.2005 թ., ք. Երևան): Սովորում է Առն Բարաջանյանի անվան երաժշտական քոլեջի երաժշտագիտական բաժնի 4-րդ կուրսում (տեսաբան) (դեկ.՝ Արմինե Արմենակի Բարոյան): Հեղինակ է՝ հրապարակախոսական և գիտական հոդվածների. «Մայենդիարյանը մեր սրտերում», //Երաժիշտ #11 (191) 2021 թ., «Ալեքսանդր Բրադյանի ստեղծագործության շուրջ», //Երաժիշտ #12 (204) 2022 թ., անտիպ՝ «Բարաջանյան մանկավարժը»:

About the author: MANE MELKON SVAZYAN (bom December 14, 2005, Yerevan) is a 4th-year student in the Musicology Department at Aram Khachaturian Music College (theoretician), (supervisor: Armine Armenak Babloyan). She is the author of several journalistic and scientific articles: "Spendiaryan in Our Hearts", Musician #11 (191), 2021; "On the Works of Alexander Iradyan", Musician #12 (204), 2022; and the unpublished work "Babajanyan the Educator".

Об авторе: МАНЕ МЕЛКОНОВНА СВАЗЯН (род. 14.12.2005, Ереван). Студентка 4-го курса музыковедческого (теоретического) отделения Музыкального колледжа имени Арно Бабаджаняна (рук. Армине Арменаковна Баблоян). Автор публичных выступлений и научных статей: «Спендиарян в наших сердцах» //Еражишт, #11 (191) 2021, «О творчестве Александра Ирадяна» //Еражишт, #12 (204) 2022.